

ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՐԻ ՖԱՈՒՆԱՅՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՈՋՆԻՆԵՐԻ
ERINACEUS EUROPAEUS LINNAEUS 1758 ԷՆՈՒՈԳԻԱՅԻՆ ԵՎ ՀԵՄՈՂԻՆԱՄԻԿԱԿԱՆ
ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Վ.Տ Հայրապետյան, Մ.Ռ Գրիգորյան, Ա.Լ.Գրիգորյան

Աշխատանքում քննարկվում է սովորական ոզնիների էկոլոգիական, էթոլոգիական առանձնահատկություններին և կենսաբանությանը նվիրված որոշ հարցեր:

Առաջին անգամ ներկայացնում ենք Ղարաբաղի ֆաունայում տարածված սովորական ոզնիների ավտիվության տիպերը և հեմոդինամիկական ցուցանիշների փոփոխությունները՝ կախված ուղղահայաց գոտիականությունից և սեզոններից:

Կաթնասունների ֆաունան Լեռնային Ղարաբաղում ներկայացված է հետևյալ կարգերով՝ միջատակներն-Insectivora, ձեռքաթևավորներ-Chiroptera, կրծողներ-Rodentia, նապաստակակերպներ-Logomorphia, գիշատիչներ-Carnivora և զույգ կզղակավորներ- Artiodactula (է.Գ. Յավրույան, Վ.Տ. Հայրապետյան, 2003, 2003Ա):

Լեռնային Ղարաբաղի կաթնասունների ֆաունան լուրջ հետազոտությունների կարիք ունի: Այստեղ չկան վերջնագրված տվյալներ կաթնասունների էկոլոգիայի, բազմացման, աճի, միգրացիայի ուղիների, մակաբույծների, տեր-մակաբույծ, գիշատիչ-զոհ փոխհարաբերությունների և ընդհանրապես կենսաբանությանը վերաբերող մի շարք տեսական ու գործնական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ: Այս առումով որպես հետազոտման օբյեկտ ենք ընտրել մեր ֆաունայում տարածման լայն արևալ ունեցող տեսակներից մեկի՝ սովորական ոզնուն- *Erinaceus europaeus* L.: Ոզնիների ընտանիքը ընդգրկում է ժամանակակից 8 ցեղեր և 16 տեսակներ, որոնք բաժանվում են երկու ենթաընտանիքների՝ հիմնուրներ -*Echinosophoricus* և ոզնիներ -*Erinaceus* (Россолимо О.И., Павлов И.Я., 1987; 1997):

Աշխատանքի համար որպես նյութ է ծառայել ինչպես ԼՂՀ տարբեր շրջաններից որսված ոզնիները, այնպես էլ մեր անձնական կոլեկցիայի թագ և չոր նմուշները: Ոզնիների էկոլոգիան ուսումնասիրելու համար Մարտակերտի և Ասկերանի շրջաններում ընտրել ենք ստացիոնարներ (քարտեզ 1): Կենդանիների կերի կազմը, էկոլոգա- էթոլոգիական առանձնահատկությունները ուսումնասիրելու համար նրանց պահել ենք նաև կենդանակեցադահլիճներում, ինչպես նաև դիտարկումներ ենք կատարել Իվանյան գյուղում՝ տնտեսված հողատարածքներում և բերքատու այգիներում: Էկոլոգիական դիտարկումները կատարել ենք կենդանաբանության մեջ կիրառվող դասական մեթոդներով, որոնք ժամանակին առաջարկել են Նովիկովը, Նաումովը (Новиков Г.А., 1949; Наямов Н.П., 1963): Ոզնիների համար սնունդ հանդիսացող միջատների տեսակային կազմը որոշելու համար օգտագործել ենք միջատաբանական որոշիչներ (Բաղդասարյան Բ.Ա., 1965, շՁԳ՝ 4 ն.թ., Арутюнян К.М., Абрамцян Б.Т., 2007):

Կապված ոզնիների ուղղահայաց գոտիականությամբ տարածվածության հետ ՊԲ Իվանյանի գիմնոթական հոսպիտալի կլինիկական լաբորատորիայում որոշել ենք այս կենդանիների հեմոդինամիկական ցուցանիշների փոփոխությունները, հաշվի առնելով նաև սեզոնայնությունը: Արյան հետաքննությունը և ձևավոր տարրերի հաշվարկը կատարվել է կենսաբանության մեջ ընդունված դասական մեթոդներով (Միհայսյան. Ս Մ., Հակոբյան Ն.Ս. և ուրիշներ, 2003):

Սովորական ոզնիները մեր ֆաունայում զբաղեցնում են տարբեր լանդշաֆտային գոտիներ, սկսած ծովի մակերևույթից 350-400 մ բարձրություններից մինչև 2000-2300 մ բարձրությունները

(Հայրապետյան, 2001): Ուստի հաշվի առնելով նրանց տարածման լայն արեւալը առաջարկում ենք Ղարաբաղի ֆաունայում սովորական ոգնուս համարել ֆոնային:

Որքան էլ առանձնակալան ինի սովորական ոգնիների տարածման արեւալը, այնուամենայնիվ նրանք ունեն իրենց բնադրման սիրելի վայրերը, դրանք են գետերի, ջրամբարների ափամերձ տարածքները, անտառների բացատները, այգիները, բանջարանոցները և այլն: Ոգնիները միայնակ կենդանիներ են և վատ են տանում իրենց զնդակիցների ներկայությունը: Ակտիվ պահպանում են իրենց դրսևտարածքները, որոնց մեծությունը կարող է կազմել մինչև 2-2,5 հա: Որսատարածքի մեծությունը պայմանավորված է տվյալ տարածքում կերի առատությամբ և կազմով: Այս կենդանիները վարում են մթնշաղագիշերային կենսակերպ, երբեմն տարվա տաք և մեղմ ժամանակներին հայտնվում են նաև օրվա լուսավոր ժամերին: Մեր դիտարկումների արդյունքում պարզվել է, որ ոգնիների ակտիվության տիպերը կարելի է բաժանել մի քանի խմբերի.

1. Վաղ մթնշաղային՝ ժամը 7³⁰ և տևում է մինչև 10⁰⁰, որից հետո թաքնվում են:
2. Գիշերային, սկսվում է ժամը 11³⁰ և տևում մինչև 03⁰⁰:
3. Վաղ առավոտյան՝ ժամը 04⁰⁰ կարող է տևել մինչև 7-7³⁰:

Նշված ակտիվության տիպը այս կենդանիների կենսակերպում բնորոշ է մայիս ամսից մինչև վաղ աշուն, որից հետո երեկոյան և գիշերային տիպի ակտիվությունը փոխվում է զերեկայինի: Ոգնիների ակտիվության տիպը պայմանավորված է նաև նրանց համար սնունդ հանդիսացող միջատների, կրծողների ակտիվությամբ:

Ոգնիները ձմեռային բնրը պատրաստում են խիտ մացառուտներում, թափված տերևների տակ, հարթավայրային կիսափչակներում, ընկած ծառերի սնամեջ բնրում և այլն: Ամառային բնր ոգնիները շեն կառուցում և թաքնվում են ցանկացած թաքստոցներում: Մեր դիտարկումների արդյունքում պարզվել է, որ ոգնիները իրենց նախկին թաքստոցներ շեն վերադառնում: Ամառային բնր կառուցում են միայն բազմացման շրջանում և բույն վերադառնում միայն ձագերին կաթով կերակրելու ժամանակ, որը տևում է 1-1,5 ամիս:

Բազմացման շրջանը սկսվում է ձմեռային քնից անմիջապես հետո: Քնից առավել շուտ արթնանում են արունները: Հղիությունը տևում է 49-50 օր: Տարվա մեջ ունենում են մեկ ծին, սերնդում՝ 5-6 ձագ: Չագուկները ծնվում են մերկ, կույր և անօգնական, որոնց մաշկը լինում է վառ վարդագույն: Սակայն մի քանի ժամ հետո նկատելի են փափուկ, սպիտակ և մառ բծերով փշերը: Աչքերը բացվում են կյանքի 15-17 –րդ օրը: Կույր ձագուկները ևս կարող են կծկվել: Չնայած մայրը ձագուկներին կերակրում է 1-1,5 ամիս, սակայն խնամում է մինչև աշուն: Աշնան կեսերից ձագերը լքում են բնրը և անցնում ինքնուրույն կյանքի: Մեռահաւում են դառնում հաջորդ տարվա գարնանը:

Սովորական ոգնու կերաբաժինը բազմազան է: Մնվում են ինչպես անողնաշարավոր, այնպես էլ ողնաշարավոր կենդանատեսակներով: Կերաբաժնի ճնշող մասը կազմում են միջատները և նրանց թրթուրները: Միջատներից շատերը համարվում են գյուղատնտեսության և անտառատնտեսության վնասատուներ, օրինակ գնայուկները, մայիսյան բզնգները և նրանց թրթուրները, տարագույգ մետաքսագործները, մորեխները, ծղրիղները և այլն: Բացի միջատներից կերաբաժնի կզգմի մեջ են մտնում նաև մկնանման կրծողները, սողունները, գետնաբնակ թռչունների ձագուկները և նրանց ձվերը:

Մորֆոմետրիկ չափումների ենթ ենթաբերելի ԼՂՀ տարբեր շրջաններից ձևաված հարյուր (50♂, 50♀) առանձնյակ (աղյուսակ 1): Աղյուսակ 1-ի տվյալներից պարզ երևում է, որ սեռահասուն արունների և էգերի մոտ մարմնի, պոչի, ականջների և գանգի ընդհանուր երկարության, ականջների լայնության և կենդանի քաշի միջև կա հավաստի տարբերություն: Հետևում է նկատել, որ արեւալի սահմաններում սովորական ոգնիների մորֆոմետրիկ հատկանիշները փոփոխական են: Սննդական դիմորֆիզմը արտահայտված է բոլոր էքստրեմիտային զույգանիշներում: Այս կենդանիների մոտ բացակայում է նաև գունային դիմորֆիզմը:

Սովորական ոգնու *E. europaeus* L. մորֆոմետրիկ չափումները

	n	սեռ	min	max	M	m ±	δ ±	C _v %	g	P
Մարմնի երկարությունը	50	♂	22	29	25,3	0,24	1,7	6,7	9,4	>999
	50	♀	18	20	22	0,26	1,9	8,6		
Պոչի երկարությունը	50	♂	2,6	3,2	2,9	0,02	0,15	5,17	6,7	>999
	50	♀	2,3	3	2,7	0,02	0,17	6,4		
Գանգի ընդիանուր երկարությունը	50	♂	4,5	5,8	5,1	0,04	0,32	6,2	13,2	>999
	50	♀	3,9	5	4,4	0,035	0,25	5,6		
Գանգի կոնդիլոթագալ երկարությունը	50	♂	3,8	5	4,2	0,26	0,52	12,4	0,4	< 90
	50	♀	3,5	4,7	4	0,35	0,6	15		
Ականջների երկարությունը	50	♂	2	3,5	2,8	0,05	0,33	11,9	5	>999
	50	♀	1,8	3,2	2,5	0,04	0,29	11,6		
Ականջների լայնությունը	50	♂	1,6	2,1	1,8	0,018	0,13	7,1	9,7	>999
	50	♀	1,2	2	1,5	0,025	0,18	12		
Լենդանի քաշը	50	♂	700	850	778	5,17	36,7	4,7	5,1	>999
	50	♀	670	810	739	5,24	38,5	5,2		

Լենդանի Ղարաքաղում առաջին անգամ մեր կողմից, կախված ուղղահայաց գոտիակառությամբ, օտսումնասիրվել են սովորական ոգնու հեմադինամիկական ցուցանիշները՝ <նոտագոտությունը կատարել ենք տարբեր սեզոններում (աղյուսակ 2)

Աղյուսակ 2

Սովորական ոգնիների հեմադինամիկական ցուցանիշները կախված ուղղահայաց գոտիակառությունից և սեզոններից

Դիտարկումների ժամկետները		Իվանյան 600-620 մ.ձ.մ			Բաղաշա 850-900 մ.ձ.մ			Վարդկաթաղ 750 մ.ձ.մ		
		Նոտագոտված նոտները		լ/մկոցիտ	Նոտագոտված նոտները		լ/մկոցիտ	Նոտագոտված նոտները		լ/մկոցիտ
		Տեղեկություն գ/լ	Ելիթություն		Տեղեկություն գ/լ	Ելիթություն		Տեղեկություն գ/լ	Ելիթություն	
Գարուն	♂	♂134-164 ♀120-144	♂4.5.10 ¹² ♀3.7-4.5.10 ¹²	4-9.10 ³	♂134-164 ♀120-144	♂4.5.10 ¹² ♀3.7-4.5.10 ¹²	4-9.10 ³	♂134-164 ♀120-144	♂4.5.10 ¹² ♀3.7-4.5.10 ¹²	4-9.10 ³
	♀	144	4.8.10 ¹²	7.10 ³	150	4.5.10 ¹²	4.5.10 ³	118	4.7.10 ¹²	3.6.10 ³
Աշուն	♂	140	5.10 ¹²	5.2.10 ³	145	5.10 ¹²	6.2.10 ³	135	4.10 ¹²	4.5.10 ³
	♀	128	4.3.10 ¹²	6.5.10 ³	130	4.2.10 ¹²	5.8.10 ³	130	4.5.10 ¹²	5.10 ³
Ամառ	♂	135	6.3.10 ¹²	5.6.10 ³	125	5.9.10 ¹²	6.4.10 ³	140	6.10 ¹²	7.10 ³
	♀	119	5.8.10 ¹²	5.6.10 ³	110	5.6.10 ¹²	6.4.10 ³	132	5.8.10 ¹²	6.10 ³
Զմեռ	♂	108	6.10 ¹²	4.7.10 ³	101	6.1.10 ¹²	5.8.10 ³	107	6.2.10 ¹²	5.1.10 ³
	♀	106	5.10 ¹²	4.8.10 ³	104	6.10 ¹²	5.8.10 ³	109	6.10 ¹²	6.2.10 ³

Քարտեզ 1 Ստացիոնարներ



1. Բաղարա
2. Իվանյանի
3. Գանձասարի (Վանքի) ստացիոնար
4. Վարընկաթաղ (Լյուլասագ)

Աղյուսակ 2-ից ներևում է հնմողինամիկական ցուցանիշների փոփոխությունը, ըստ ուղղահայաց գոտիականության և սեզոնների: Ընտրված կենդանիների միջին կենդանի թաշը եղել է 680-700 զ.: Էզերի մոտ հղիություն չի արժանագրվել:

Քննարկելով աղյուսակ 2-ից ցուցանիշների ժամանակաշրջանի արդյունքները և նրա կախվածությունը ուղղահայաց գոտիականությունից նկատելի է աղյուսակի տարրերի քանակության կախվածությունը առանձնյակների անհատականությունից: Աղյուսակից պարզ երևում են զարնադային, ամառային և խոնավային սեզոններում հնմողությունից բարձր ցուցանիշները, որոնքն արձանների և էզերի մոտ ունեն օրաշաղկի շնորհիվ: Դա կարելի է բացատրել որպես արուների ակտիվության ցուցանիշ, որի փաստացի ապացույցն է դիտարկումների աղյուսակը: Ձմեռային շրջանում հնմողությունից քանակությունը նվազում է նորմայի սահմաններից և ավելանում է էրիթրոցիտների քանակությունը: Մեր կարծիքով աղյուսակի մեջ հնմողությունից քանակության նվազումը պայմանավորված է միջավայրի ջերմաստիճանի նվազումով:

Անագատության մեջ պահվող սովորական ձգնիների վարքագծի մեջ աչքի է զատվում այն երևույթը, որ միջավայրի ջերմաստիճանը $+9^{\circ}\text{C}$ -ից նվազելիս նրանց մոտ նկատվում է ակտիվության դանդաղում և ձգտում են մտնել քնի մեջ: Հետևաբար դրան գուցե թաքնված է օրգանիզմում ընթացող օքսիդա-վերականգնման գործընթացի համար պահանջվող թթվածնի քանակը: Ուստի հնմողությունից քանակի նվազումը ունի հարմարողական նշանակություն և

պաշտպանում է օրգանիզմի ներքին միջավայրի կայունությունը: Իսկ էրիթրոցիտների քանակության ավելացում, ըստ նրանց, իսկ հարմարողական նշանակություն ունի համարվելով հեմոգլոբինի պակասը, որն էլ արգելակում է թթվածնային քաղցը:

Ինչ վերաբերում է լեյկոցիտների քանակության փոփոխության, ապա նրանք քանակությունը տատանվում է նորմայի սահմաններում, սակայն ուղղահայաց զատիականությունից և սեզոններից կախված առկա են որոշակի շեղումներ:

Այսպիսով արյան բաղադրությունը կենդանիների ֆիզիոլոգիական վիճակի ամենանրբագագ ցուցանիշն է և, լինելով համեմատաբար կայուն, որոշակի սահմաններում, այնուամենայնիվ, բավականաչափ արագ է արձագանքում միջավայրի պայմանների փոփոխություններին ու կարող է օրգնա ինդիկատոր ծառայել միջավայրի աղտոտման աստիճանը որոշելու համար: Միաժամանակ արյան բաղադրիչների փոփոխությունները ըստ ուղղահայաց զոտիականության հնարավորություն են տալիս պարզել ու հասկանալ հիպոթիկ պայմաններին հարմարվելու մակարդակը:

Резюме

В статье обсуждаются некоторые вопросы, касающиеся биологии, экологической и эволюционной особенностей ежей обыкновенных.

Впервые нами представлены типы активности ежей обыкновенных, распространенных в фауне Карабаха и наблюдаемые у них изменения гемодинамических показателей в зависимости от вертикальных зон и сезонов.

Գրականություն

1. Բ.Ա.Բաղդասարյան, Ուղեցույց միջատներ հավաքելու, նրանց կարգերը որոշելու համար//, Երևան, 1965:
2. Վ.Տ. Հայրապետյան, ԼՂՀ միջատակներների (Insectivora) էկոլոգիան և մակարայծները// ԱրՊՀ գիտ. տեղեկագիր, 1(4), 2001, էջ 58-61:
3. Ս.Մ. Մինասյան, Ն. Ս. Հակոբյան և ուրիշներ, Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա (լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական ձեռնարկ)// ԵՊՀ, Երևան, 2003թ. էջ 12-23:
4. Է.Գ.Յավրույան, Վ.Տ.Հայրապետյան, Ղարաբաղի վայրի կաթնասունները// Ստեփանակերտ, «Իզգակ պլուս», մաս I, 2003, էջ 12-15:
5. Է.Գ.Յավրույան, Վ.Տ.Հայրապետյան, Ղարաբաղի վայրի կաթնասունները// Ստեփանակերտ, «Իզգակ պլուս», մաս III, 2003Ս, էջ 4-48:
6. Н.И. Наумов, Экология животных//, Москва, 1963, ст. 3-575.
7. Г.А. Новиков, Полевые исследования экологии наземных позвоночных животных//, совет. Наука, 1949, ст. 12-574.
8. И.Я. Павлинов, О.Л.Россолимо, Систематика млекопитающих СССР//, Москва,1987, ст. 10-14.
9. О.Л. Россолимо, И.Я. Павлинов, Разнообразие млекопитающих//, Москва, 1997, ст. 43-46.
10. Э.Г.Явруян, К.М.Арутюнян, В.Т.Айрапетян, Определитель классов, подклассов и отрядов наземных членистоногих Армении и Нагорного Карабаха (учебное пособие)//, Российско-Армянский (Славянский) университет, Ереван, изд. РАУ, 2007, ст. 3-52.